Թեմատիկ
ընթերցանության
նյութեր

Տեղական
ժողովրդավարության
Դպրոց

Մարդու իրավունքները կառավարման և հաղորդակցման տեսանկյունից

ԹԵՄԱ 12.
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Բովանդակություն

Մարդու իրավունքները կառավարման և հաղորդակցության տեսանկյունից 2

Գրականություն 6

Մարդու իրավունքները կառավարման և հաղորդակցության տեսանկյունից

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948) նախաբանում ասվում է՝

---

*- քանզի մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ **արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների** ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է,*

*- քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և քանի որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և **զերծ կլինեն վախից ու կարիքից:***

Իրավունքահեն կառավարման հիմքում ընկած են Հռչակագրով, միջազգային և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված մարդու արժանապատվության, հավասար և անօտարելի իրավունքների հանդեպ հարգանքը, ինչպես նաև դրանցից բխող մասնակցային, ներառական և թափանցիկ հանրային կառավարման մոդելները:

Իրավունքահեն կառավարումը պատկերացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ, թե ինչ են, ըստ էության, մարդու իրավունքները, ինչու են դրանք համընդհանուր և համամարդկային, որն է կապը միջազգային իրավունքի և տեղական ինքնակառավարման մակարդակների միջև և, վերջապես, հասկանալ, թե ինչ ազդեցություն ունի այս ամենը մեր կյանքի և կենսագործունեության վրա:

Նույն սկզբունքով էլ կառուցվում է *համայնքի իրավունքահեն կառավարման* մոդելը, որը ենթադրում է խտրականությունը բացառող, ներառական, մասնակցային, թափանցիկ և համայնքի յուրաքանչյուր անդամին իշխանավորող մոտեցում: Այս մոտեցումը հաջողությամբ կիրառվում է բազմաթիվ զարգացման ծրագրերում ամբողջ աշխարհում և արդեն ապացուցել է իր արդյունավետությունը՝ զարգացման կայուն աճ արձանագրելու միջոցով:

Իրավունքահեն կառավարման մոտեցման հիմքում ընկած են հարգանքը մարդու, նրա արժանապատվության և անքակտելի իրավունքների հանդեպ, ինչպես նաև հասարակության յուրաքանչյուր անդամին լիարժեք և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն ընձեռելու ձգտումը: Պետությունն անմիջական պարտավորություն ունի ապահովելու, որպեսզի իր իրավասության շրջանակներում գտնվող յուրաքանչյուր անձ կարողանա իրագործել իր մարդու իրավունքները և ազատությունները: Սա նշանակում է, որ պետությունը պետք է ապահովի և պաշտպանի յուրաքանչյուր անձի իրավունքները և ազատությունները՝ անկախ նրա սեռից, ազգությունից, քաղաքացիությունից կամ այլ անձնական հատկանիշներից: Ըստ իրավունքահեն կառավարման մոտեցման, շահառուները ընկալվում են որպես *իրավունքներ կրողներ*

(rights holders), իսկ ՏԻՄ-ը ՝ որպես պատասխանատվություն *ստանձնողներ* (duty-bearers): Դրանց միջև հարաբերությունները պետք է լինեն հնարավորինս հորիզոնական և փոխադարձորեն իշխանավորող:

Իրավունքահեն կառավարման մոդելի հիմնական սկզբունքներն են.

- մասնակցայնությունը,
- հաշվետվողականությունը,
- հավասարությունը և խտրականության բացառումը,
- իշխանավորումը,
- օրինականությունը:

Այս համատեքստում շատ էական է խտրականության բացառումը և խոցելի խմբերի հանդեպ ներառական մոտեցումը: Խտրականությունը սահմանվում է որպես նման իրավիճակում տարբերակված վերաբերմունքի դրսևորում՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության[1]: ՀՀ Սահմանադրության 29-րդ գլուխը նվիրված է խտրականության արգելքին: Ըստ ՀՀ գործող օրենսդրության, խտրականությունը կարող է տեղի ունենալ հետևյալ հիմքերով՝

- խտրականություն սեռի հատկանիշով,
- խտրականություն ռասայի և մաշկի գույնի հատկանիշով,
- խտրականություն լեզվի հատկանիշով,
- խտրականություն կրոնի հատկանիշով,
- խտրականություն քաղաքական կամ այլ համոզմունքի հատկանիշով,
- խտրականություն ազգային/էթնիկական կամ սոցիալական ծագման հատկանիշով,
- խտրականություն ազգային փոքրամասնությանը պատկանելու հատկանիշով,
- խտրականություն գույքային դրության հատկանիշով,
- խտրականություն ծննդի հատկանիշով,
- խտրականություն այլ դրության հատկանիշով:

Խտրականության դրսևորման տեսակների այս ցանկը սպառիչ չէ և չի բացառում խտրականության այլ հիմքեր ևս:

Ցավոք սրտի, Հայաստանում խտրականությունը, գրեթե բոլոր վերոհիշյալ հիմքերով, շարունակում է մնալ ամենահաճախ ոտնահարվող մարդու իրավունքների ոլորտներից մեկը:

[1] Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 40094/05, 02.10.2012թ., § 199):

Որպես օրինակ կարող ենք քննարկել մեր երկրում տեղ գտած կանանց հանդեպ խտրական վերաբերմունքը: Հայաստանը միացել է «Կանաց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման» ՄԱԿ-ի կոնվենցիային, իսկ ներպետական մակարդակում 2013 թ. ընդունել «Կանանց *և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար* հնարավորությունների ապահովման *մասին*» օրենքը: Այնուամենայնիվ, կանանց մասնակցությունը քաղաքական, կառավարման և որոշումներ կայացնելու գործընթացներում շարունակում է մնաց ցածր: Կանաց հիմնախնդիրները՝ առողջապահության, երեխաների խնամքի, աշխատանքի և բազմաթիվ այլ ոլորտներում անտեսվում են կամ առաջնային չեն դիտարկվում:

Իրավունքահեն կառավարման պարագայում համայնքային զարգացման պլանները, բյուջեները և առաջնայնությունները պետք է սահմանվեն կանանց անմիջական ներգրավմամբ և մասնակցությամբ: Նույնը վերաբերում է սոցիալական այլ խմբերին՝ երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային և կրոնական փոքրամասնություններին, սոցիալական դժվարին իրավիճակում գտնվող անձանց և այլոց:

Մասնակցությունն ու ներգրավումը նշանակում է, որ մարդիկ իրավունք ունեն ակտիվ, ազատ և իմաստալից մասնակցություն ունենալ այնպիսի որոշումների կայացմանը, որոնք ուղղակիորեն ազդում են իրենց վրա, ինչպիսիք են ծրագրերի նախագծումը, իրականացումը և մշտադիտարկումը:

Հաղորդակցությունը մասնակցային գործընթացների կարևոր բաղադրիչ է: Մասնակցությունը կարող է իմաստալից լինել միայն այն դեպքում, երբ տեղեկատվությունը հասանելի է լինում ժամանակին, մատչելի լեզվով ու ձևաչափով՝ հաշվի առնելով այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են, օրինակ, տարիքը, սեռը և մշակույթը: Արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ է նաև, որպեսզի երաշխավորված լինի միավորումների և հավաքների ազատությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինը (ՏԻՄ) մարդուն ամենամոտ կառավարման օղակն է, պրակտիկ ժողովրդավարության հիմքերից մեկը: *Ինքնակառավարում* բառն արդեն իսկ մատնանշում է մասնակցային ժողովրդավարության ամենաբարձր մակարդակը, որտեղ համայնքը կառավարվում է այդ իսկ հանրույթի անդամների անմիջական մասնակցության միջոցով: Ժողովրդավարությունն էլ, իր հերթին, անհնարին է պատկերացնել առանց մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց հիմքում ընկած արժեքների հանդեպ հարգանքի: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

*2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը **հանրային իշխանության** պարտականություններն են»:*

Հանրային իշխանության համակարգում, ինչպես արդեն նշվեց, տեղական ինքնակառավարման մարմինները կամ տեղական իշխանությունները մարդուն ամենամոտ հանրային կառավարման օղակն են հանդիսանում: Նրանք ամեն օր սերտորեն առնչվում են քաղաքացիների հանապազօրյա կարիքների, բազմատեսակ ծառայությունների մատուցման և մարդու իրավունքներին վերաբերող լայն շրջանակի հետ:

Իրենց գործառույթներն իրականացնելիս տեղական իշխանությունները որոշումներ են կայացնում, որոնք ուղղակիորեն առնչվում են կրթությանը, բնակարանային հարցերին, առողջապահությանը, ջրային ռեսուրսների կառավարմանը, աղբահանությանը, շրջակա միջավայրին: Բոլոր այդ ոլորտները անմիջականորեն կապված են մարդու իրավունքների հետ[2] և դրանց շուրջ որոշումների կայացումը կարող է ամրապնդել կամ թուլացնել քաղաքացիների՝ իրենց իրավունքների իրացման հնարավորությունները: Այսպիսով, տեղական իշխանությունները իրենց առօրյա աշխատանքում մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ հարցերի համար կրում են պատասխանատվություն:

Ավելին, ՏԻՄ դերը չի սահմանափակվում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներով, այլև ներառում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, ինչպես օրինակ՝ խաղաղ հավաքների իրավունքի իրացման պարտավորությունը: Տեղական իշխանությունները պարտավոր են տեղական մակարդակում ապահովել հավասար հնարավորություններ բոլորի համար, և, մասնավորապես պաշտպանելու կանանց ու խոցելի խմբերի՝ ինչպես օրինակ երեխաների, փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց, միգրանտների, փախստականների, աղքատների ու մարգինալացված անձանց մարդու իրավունքները:

Իրավունքահեն կառավարումը կարևորություն է տալիս ոչ միայն արդյունքներին, այլ նաև գործընթացին: Մարդու իրավունքների չափանիշներն ու սկզբունքները, ինչպիսիք են՝ մասնակցությունը, պատասխանատվությունը, հավասարությունն ու խտրականության արգելքը, պետք է ներառված լինեն բոլոր փուլերում: Մասնակցությունը, օրինակ, մարդկանց մոտ մեծացնում է սեփականության ու պատասխանատվության զգացումը և օգնում, որպեսզի ՏԻՄ քաղաքականությունն ու

[2] Տես՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf

ծրագրերը համապատասխանեն այն մարդկանց կարիքներին, ում դրանք միտված են օգնել:

Ակնհայտ է, որ իրավունքահեն կառավարման մոդելը համայնքում ներդնելու համար անհրաժեշտ է ՏԻՄ աշխատակազմի և ավագանու անդամների շահագրգիռ մասնակցությունը: Շատ էական է նաև, որ ՏԻՄ-ի ներսում տեղ գտնեն իրավունքահեն կառավարման մոտեցումները: Խոսքը գնում է աշխատանքային իրավունքների լիակատար ապահովման, ցանկացած հիմքով խտրականության բացառման, թափանցիկության, օրինականության, մասնակցային կառավարման և աշխատակիցներին իշխանավորման մասին:

Գրականություն

1. Իրավունքահենքությունը գործնականում. հայաստանյան համատեքստ, Անահիտ Սիմոնյան, EVN Report, հուլիս 2018, հասանելի է՝ https://bit.ly/2NSM2Ad

2. Role of local government in the promotion and protection of human rights – Final report of the Human Rights Council Advisory Committee, Human Rights Council, August 2015, հասանելի է՝ https://bit.ly/33SXHV8

3. Local government and human rights: Report of the United Nations High Commissioner for Human Rights, Human Rights Council, July 2019, հասանելի է՝ https://www.ohchr.org/Documents/Issues/LocalGvt/G1919697.pdf

4. Աշխատանք ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինների հետ. ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար, ԵՀՀ, 2016, հասանելի է՝ https://bit.ly/2NRAcXd